29.12.2025թ.

Լոռու մարզպետ
Արեն Մկրտչյանին

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի
«Հետք» թերթի լրագրող
Գրիշա Բալասանյանից
Քաղաքացիությունը՝ Հայաստանի Հանրապետութուն
Հեռ. 093-82-26-80, e-mail: grisha.balasanyan@hetq.am

Հարգելի պարոն *Մկրտչյան*,

«Հետք» էլեկտրոնային թերթը հոդված է պատրաստում: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6, 9, 12-րդ հոդվածների հիմքով խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին.

1. 2021-2025 թվականներին, որպես պարգևավճար կամ դրան հավասարեցված այլ վճար, որքա՞ն գումար է հատկացվել մարզպետարանի աշխատակիցներին և մարզպետին, մարզպետի տեղակալներին: ***Տեղեկատվությունը տրամադրել ըստ տարիների՝ առանձնացնելով մարզպետին, տեղակալներին մարզպետարանի մյուս աշխատակիցներից:***

2. 2021-2025 թվականներին հատկացված պարգևավճարը կամ դրան հավասարեցված այլ վճարը մարզպետարանի քանի՞ աշխատակից է ստացել, այդ թվում՝ մարզպետն ու տեղակալները: ***Տեղեկատվությունը տրամադրել ըստ տարիների՝ առանձնացնելով մարզպետին, տեղակալներին մարզպետարանի մյուս աշխատակիցներից:***

3. 2021-2025 թվականներին պարգևավճար կամ դրան հավասարեցված այլ վճար չստացող մարզպետարանի աշխատակից և մարզպետ, մարզպետի տեղակալներ եղե՞լ են: ***Տեղեկատվությունը տրամադրել ըստ տարիների՝ առանձնացնելով մարզպետին, տեղակալներին մարզպետարանի մյուս աշխատակիցներից:***

4. 2021-2025 թվականներին եղե՞լ է մարզպետարանի աշխատակից և մարզպետ, մարզպետի տեղակալ, որ ինքնակամ հրաժարվել է պարգևավճար կամ դրան հավասարեցված այլ վճար ստանալուց: ***Տեղեկատվությունը տրամադրել ըստ տարիների՝ առանձնացնելով մարզպետին, տեղակալներին մարզպետարանի մյուս աշխատակիցներից:***

5. 2021-2025 թվականներին հատկացված պարգևավճարը կամ դրան հավասարեցված այլ վճարը մարզպետարանի աշխատակիցներին և մարզպետին, մարզպետի տեղակալներին ո՞ր ամիսներին է հատկացվել և ի՞նչ նպատակով: ***Տեղեկատվությունը տրամադրել ըստ տարիների՝ առանձնացնելով մարզպետին, տեղակալներին մարզպետարանի մյուս աշխատակիցներից:***

*Հ.Գ. տեղեկատվությունը տրամադրել ապանձնավորված՝ բացառությամբ այն այն դեպքերի երբ պաշտոնյան հայտարարատու է կամ ցանկացել է նշել իր անունը, այլ տվյալներ,*

*հետևաբար խնդրում եմ չմերժել՝ անձնական տվյալ լինելու կամ նմանատիպ այլ պատճառաբանությամբ։*

Կանխավ շնորհակալություն

Դիմող՝ Գ. *Բալասանյան*